Գործող, առողջապահական և անվտանգության ենթակոմիտեներ
Հունիսի 24, 2020, կեսօրից հետո ժամը 4:00

Ներկա են. Դեբբի Կուկտա, Լերրի Քրոսս, Քյաթի Սեսինգհաուս, Ստեյսի Քաշման, Սալլի Չյու, Ինգրիդ Ջեյմս, Շերի Բուրկհարթ, Սյուզի Դանն, Ռիկ Վոնկ, Սանդրա ԴիԲարրոս, Վենդի Հարվել, Թոնի Ֆրանկո, Չառ Թաբեթ, Լուիս Այալա, Մարիա Յուրիբե, Իշ Լոպես, Լենորա Ագիլերա, Լիսա Ռալույ

Սրանք առաջարկներ են, այն դեպքում, երբ աշակերտները և աշխատակիցները անձամբ կվերադառնան դպրոց:

Դեբբի
- Հարվարդի ռիսկի նվազեցում դպրոցները բացելու կապակցությամբ – ցանկանում եմ նշել, որ բազմաթիվ առաջարկներ կան, որոնք մենք արդեն հաշվի ենք առել: Առաջարկվում է բոլորին վերանայել այն և տեսնել, թե արդյո՞ք լրացուցիչ մտքեր կլինեն արտահայտելու:

Առողջապահություն և անվտանգություն.
- Հանդերձարանները չենք օգտագործելու, որովհետև դժվար կլինի հասարակական հեռավորություն պահել:
- Քաջալերում ենք դրսում խաղալը, քանի դեռ աշակերտները իրար մոտիկ չեն լինի:
- Կորոնավիրուսի ախտանշանների նման աշխտանշաններ ցուցաբերող երեխաները կհետևեն հանրային առողջապահության հրահանգներին, սա պետք է պարզ կերպ նշել ծնողների համար:
- Կարանտինի պարամետրերը բխելու են հանրային առողջապահության հրահանգներից:
- ԲԴՄՇ-ն արդեն վարակիչ հիվանդությունների ընթացակարգեր ունի, որը և կվերաբերվի Կորոնավիրուսին և կհետևեն դրանց:
- Եթե երեխային տուն ուղարկենք, որը Կորոնավիրուսի ախտանշանների նման աշխտանշաններ ունի, ապա ծնողները պետք է դիմեն երեխայի մանկաբուժին և գրության միջոցով հաստատեն, որ երեխան չունի վարակիչ հիվանդություն (ինչպիսին է ալերգիան):
- Հիվանդությունից և/կամ կարանտինից հետ վերադարձող աշակերտները, պետք է ստուգվեն բուժկետի աշխտակազմի կողմից:

Սննդի ծառայություններ.
- Սննդի ծառայությունները պլան են մշակել սնունդ բաշխել կրթական ցանկացած մոդելի ընթացքում:
- Հիբրիդ մոդելի ընթացքում նախապատվությունը տրվում է շաբաթական մեկ անգամ սննդի բաշխման (հավանաբար ուրբաթ օրերին):
- Սննդի ծառայությունները պատրաստ են ընդունել փոփոխություններ:

Շինություններ.
- Հեռավորությունը պահելու համար, գետնի վրա նշաններ կատարել:
- Սահմանափակել աշակերտների թիվը սանհանգույցներում:
- Հանդերձարաններ – միջանկյալ դպրոցները չեն օգտագործելու, իսկ միջնակարգ դպրոցը՝ դեռ որոշում չի կայացրել:

- Ձեռքի ախտահանիչ նյութերը, դասասենյակները և գրասենյակները մաքրող նյութերը և այլն գտնվում են պահեստում: Դպրոցները պետք է օգտվեն այս նյութերից և չպատվիրեն իրենք իրենց համար առանձին նյութեր:

Տեխնոլոգիայի ենթակառուցվածք.
- Տեխնոլոգիայի թիմն աշխատում է, որ ուղիղ եթերով ներկայացնի դասընթացները:
- Համակարգիչները պետք է համապատասխան նյութերով սրբվեն և ոչ թե փչովի նյութերի միջոցով:
- Ձեռք է բերվել ուլտրամանուշակագույն ճառագայթով մաքրող սարք: Այն շատ դանդաղ է աշխատում (15 րոպե մեկ սարք մաքրելու համար) և դրա համար այն գործնական չէ շրջանում լայնածավալորեն օգտագործելու համար:

Երեկոյան ժամը 5:01